

20.09.2023

Սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման պայմանագրերը լուծված լինելու վերաբերյալ ծանուցում <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերության սպառողներ (դիմող անձիք) <<ԲԵՎԵՐԼԻ ՀԻԼԼՍ>> ՍՊԸ ին (միացման պատվեր՝ 84387111 , № 0546493 պայմանագիր) <<ԲԵՎԵՐԼԻ ՀԻԼԼՍ>> ՍՊԸ ին (միացման պատվեր՝ 84388111 , № 0546494 պայմանագիր) ՈԱԶՄԻԿ ԳՈՐԻՄԻ ին (միացման պատվեր՝ 99603111 , № 0574242 պայմանագիր)

Հայտատու՝ <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.12.2019 թվականի թիվ 523-Ն որոշմամբ հաստատված կանոնների 8-րդ կետ

<<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերության և Ձեր (սույն ծանուցմամբ նշված սպառողների ,դիմող անձանց) միջև կնքվել է սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագիր), որով մինչ օրս Ձեր (սույն ծանուցմամբ նշված սպառողների, դիմող անձանց) կողմից չի կատարվել կանխավճարի (կառուցապատողի դեպքում՝ միացման վճարի) վճարման պարտավորությունը:

Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ սպառողը միացման վճարի 50 տոկոսը (Կառուցապատողի դեպքում՝ միացման վճարը) սույն պայմանագրի կնքման պահից 10 օրվա ընթացքում փոխանցում է Բաշխողի՝ սույն պայմանագրի վավերապայմաններում նշված միացման վճարի համար նախատեսված բանկային հաշվին:

Պայմանագրով սահմանված կարգավորումների համաձայն՝ Պայմանագիրը լուծվում է Բաշխողի կողմից միակողմանի Սպառողի կողմից կանխավճարը (Կառուցապատողի դեպքում՝ միացման վճարը)

Պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում:

Ընդ որում պայմանագիրը համարվում է լուծված համապատասխանաբար կանխավճարի (Կառուցապատողի դեպքում՝ միացման վճարի) վճարման ժամկետի ավարտի օրվան հաջորդող օրը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր (սույն ծանուցմամբ նշված սպառողների, դիմող անձանց) կողմից չի կատարվել Պայմանագրով սահմանված ժամկետում կանխավճարի (կառուցապատողի դեպքում՝ միացման վճարի) ամբողջական վճարում՝ Պայմանագիրը համարվում է լուծված և Ձեր (սույն ծանուցմամբ նշված սպառողների, դիմող անձանց) կողմից Ընկերությանը Պայմանագրի շրջանակներում կատարված թերի վճարը ենթակա է վերադարձման:

Առաջարկվում է Ընկերությանը տրամադրել Ձեր (սույն ծանուցմամբ նշված սպառողների, դիմող անձանց) անվամբ բանկում բացված հաշվեհամարի տվյալները (հաշվեհամար, բանկ), որպեսզի Ընկերության կողմից Ձեզ (սույն ծանուցմամբ նշված սպառողների, դիմող անձանց) վերադարձվի կատարված վճարումը:

Ձեր (սույն ծանուցմամբ նշված սպառողների, դիմող անձանց) անվամբ գործող բանկային հաշվեհամարի բացակայության պարագայում անհրաժեշտ է Ընկերությանը հետադարձ գրությամբ ներկայացնել համաձայնությունն առ այն, որ Ընկերությունը վերադարձման ենթակա գումարը իրավասու է փոխանցել Ընկերության բանկային տարանցիկ հաշվեհամարին և Դուք անձնագրի ներկայացման միջոցով կարող եք ստանալ կատարված կանխավճարը:

Սույն ծանուցման մեջ նշված սպառողները տեղեկացվում են, որ սույն ծանուցումը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ օրը ծանուցումը համարվում է պատշաճ հանձնված:

Հասցե՝ Զ. Երևան, Նորք Մարաշ, Ա. Արմենակյան 127

Հեռ.՝ +374-10-650086

Վեբ կայք՝ <https://www.ena.am/>

Էլ. փոստ՝ office@ena.am